

Բ Ա Ն Ա Ս Ս Ի Ր Ա Կ Ա Ն Ք

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Ա Շ ՈՒ Ն

Ողջոյն պսակեալ ծառոցդ ի դոյզըն դալար ,
Դեղին տերեւք ընդ մարգս անկեալ դիր եւ տար .
Ողջոյն յետին սիրուն աւուրց . բնութեան սուգք
Իմ են ցաւոց ի դէպ , աչացս եւ հաճոյք :

Ես մըտայոյզ գընամ զուղին միայնակ .
Դիտել սիրեմ եւ ըզվերջին մի նըւագ
Ըզգայկադէմն արփի , աղօտ ոյր շողիւն
Օտուրքս հազիւ մայրեաց ցելու զմըթուծիւն :

Ես , յաւուրքս այս , ուր բնութիւն շիջանի՝
Սքօղեալ բըբացն են ինձ հրապոյրք աւելի .
Ես մըտերմին ողջոյն , ժըպիտն է յետին
Շըրթանց՝ ոյր ցանգ փակել ի մահ կայ լըռին ,

Եսպէս զկենաց մերձեալ թողուլ ես զափունս ,
Լալով 'նդ երկար աւուրցս ի զուր ելեալ յոյս ,
Դարձ դեռ առնեմ , եւ լի աչօք նախանձու
Խորհիմ 'նդ բարիս որոց չեղէ ես հասու :

Երփի , երկիր , ձորք , բնութիւն քաղցր եւ հեշտին ,
Ձեզ արտասուք յինէն յեզերց տապանին .
Օ ի խընկաբեր են օդք , եւ զի վըճիտ լոյս ,
Օ ի արդ շըբեղ արեւն ի բիբ մահացուս :

Երդ՝ մինչ ըզմըուր եւս իսկ քամել են ինձ կամք
Օ այս զի նեկտար եւ լեղի խառըն բաժակ .
Դուցէ յատակս անդ մընացեալ էր նորին .
Շ ի թս ինչ մեղեր ուր ես ըզկեանս ըմպէին :

Դուցէ պահէր ինձ հանդերձեալըն տակաւ
Բարօրութեան ինչ դարձ որոյ յոյս կորեաւ .
Դուցէ անգէտ ոք ինձ ոգի , խուժանին
Օ իմս իմացեալ՝ պատասխանի տայր նըմին :

Աբբի ծաղիկն ըզհօտ թողեալ ի զեփիւռ .
Ի կեանս , յարփի այս են յետին ողջոյնք իւր .
Սեռանիմ ես , եւ ի յետին անդ պահու
Սրանայ հոգիս զերդ ձայն տըխուր եւ աղու :

ԼԱՄԱՐԴԻՆ